ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Ազգային ժողովի կանոնակարգ>> սահմանադրական օրենքի 163-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչպես նաև Ազգային ժողովի աշխատակարգի 109-րդ կետով հանձնաժողովը որոշեց.

Ազգային ժողովի նախագահին առաջարկել հինգ տարի ժամկետով երկարաձգել Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետ Գագիկ Գառնիկի Բարսեղյանի և Ազգային ժողովի աշխատակազմի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ

Պետական բյուջեի ընդունման և դրա կատարման նկատմամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին վերապահված վերահսկողական լիազորությունների արդյունավետ իրականացմանը նպաստելու, ինպես նաև պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին մասնագիտական աջակցություն ու տեղեկատվություն տրամադրելու նպատակով 2015 թվականի մարտի 25-ի <<Ազգային ժողովի կանոնակարգ>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքով կազմավորվել է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ (այսուհետ Բյուջետային գրասենյակ): Բյուջետային գրասենյակն իր գործունեությունը սկսել է 2016 թվականի հունվարի 16-ից:

Հայաստանի Հանրապետության <<Ազգային ժողովի կանոնակարգ>> սահմանադրական օրենքի 163-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ Բյուջետային գրասենյակի գործունեության ընդհանուր համակարգումն ու մշտադիտարկումն իրականացնում է իրավասու մշտական հանձնաժողովը, այն է Աժ ֆինանսավարկային և բյուեջտային հարցերի մշտական հանձնաժողովը, իսկ 3-րդ մասով սահմանվում է, որ Բյուջետային գրասենյակը գործում է Կանոնակարգին, Աշխատակարգին և իր աշխատակարգին համապատասխան:

Բյուջետային գրասենյակը կազմված է համակարգող փորձագետից և չորս այլ փորձագետներից, որոնք աշխատանքի են ընդունվում մրցույթով, Խորհրդի սահմանած կարգով՝ հինգ տարի ժամկետով Աշխատակազմի հետ կնքված աշխատանքային պայմանագրով, որի գործողությունը կարող է նույն ժամկետով երկարաձգվել իրավասու հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ (Ազգային ժողովի աշխատակարգի 109-րդ կետ):

Գագիկ Գառնիկի Բարսեղյանը ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիան, Հայաստանի Հանրապետության կառավարման դպրոցը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան: Նա ունի տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, ինչպես նաև հաշվապահական հաշվառման և ֆինանսների գծով տնտեսագետի ու պետական ծառայողի որոկավորում: Ավարտել է նաև Բոստոնի (ԱՄՆ) Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցի «Հանրային քաղաքականություն և

կառավարում» թեմայով խորացված դասընթացը: Բացի այդ, 2004 թվականից ի վեր մասնակցել է շուրջ երեք տասնյակ ուսումնական այցերի և որակավորման բարձրացման դասընթացների Ռուսաստանում, Լիտվայում, Ավստրիայում, Սլովենիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Լեհաստանում, Շոտլանդիայում, Ուելսում և ԱՄՆ-ում, որոնք ուղղակիորեն կապված են եղել իր աշխատանքային գործունեության հետ, այդ թվում, խորհրդարանական վերահսկողության գործիքակազմի, դրանց ներդրման ու արդյունավետ կիրառման հետ:

Գագիկ Բարսեղյանը իր աշխատանքային գործունեությունը սկսել է 1999 թվականից, աշխատելով որպես ՀՀ գյուղատնտեսության նախարարի աշխատակազմի ղեկավար, ՀՀ վարչապետի խորհրդականի օգնական, Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետայի և տնտեսական հարցերի, այնուհետև Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետայի հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ: 2016 թվականի հունվարի 16-ից, մրցույթի արդյունքում հաղթել և նշանակվել է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետի պաշտոնում, որտեղ աշխատում է առ այսօր (աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանում է 2021 թվականի հունվարի 16-ին):

Իր աշխատանքային գործունեության ընթացքում իր ներդրումն է ունեցել այնպիսի խորհրդարանական վերահսկողության գործիքների ներդրման ու զարգացման մեջ, ինչպիսիք են՝ պետական բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյակը մեկ Կառավարության կողմից Ազգային ժողով ներկայացված տեղեկատվության, ինչպես նաև Վերահսկիչ, հետագայում Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների քննարկումները ոլորտային մշտական հանձնաժողովում, Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի ստեղծումն ու կայացումը: Անմիջականորեն ներգրավված է եղել ՀՀ-ում ծրագրային բյուջետավորման ներդրման և Հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների իրականացման գործընթացներում: 2008 թվականին և 2013 թվականին եղել է պետական ֆինանսների կառավարման համակարգի հաշվետվության կազմման ու գնահատման Աժ աշխատանքային խմբի ղեկավարը և այլն:

Պայմանավորված վերոնշյալով, ինչպես նաև աշխատանքի անընդհատությունն ու շարունակականությունն ապահովելու կարևորությամբ, նպատակահարմար է հնարավորություն տալ Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետ Գագիկ Գառնիկի Բարսեղյանին ևս 5 տարի ժամկետով իրականացնել իր աշխատանքային պարտականությունները՝ Աժ նախագահին առաջարկելով նշված ժամկետով երկարաձգել նրա և Ազգային ժողովի աշխատակազմի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Ազգային ժողովի կանոնակարգ>> սահմանադրական օրենքի 163-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչպես նաև Ազգային ժողովի աշխատակարգի 109-րդ կետով հանձնաժողովը որոշեց.

Ազգային ժողովի նախագահին առաջարկել հինգ տարի ժամկետով երկարաձգել Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի փորձագետ Աշոտ Արծրունի Եղիազարյանի և Ազգային ժողովի աշխատակազմի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ

Պետական բյուջեի ընդունման և դրա կատարման նկատմամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին վերապահված վերահսկողական լիազորությունների արդյունավետ իրականացմանը նպաստելու, ինպես նաև պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին մասնագիտական աջակցություն ու տեղեկատվություն տրամադրելու նպատակով 2015 թվականի մարտի 25-ի <<Ազգային ժողովի կանոնակարգ>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքով կազմավորվել է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ (այսուհետ Բյուջետային գրասենյակ): Բյուջետային գրասենյակն իր գործունեությունը սկսել է 2016 թվականի հունվարի 16-ից:

Հայաստանի Հանրապետության <<Ազգային ժողովի կանոնակարգ>> սահմանադրական օրենքի 163-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ Բյուջետային գրասենյակի գործունեության ընդհանուր համակարգումն ու մշտադիտարկումը իրականացնում է իրավասու մշտական հանձնաժողովը, այն է Աժ ֆինանսավարկային և բյուեջտային հարցերի մշտական հանձնաժողովը, իսկ 3-րդ մասով սահմանվում է, որ Բյուջետային գրասենյակը գործում է Կանոնակարգին, Աշխատակարգին և իր աշխատակարգին համապատասխան:

Բյուջետային գրասենյակը կազմված է համակարգող փորձագետից և չորս այլ փորձագետներից, որոնք աշխատանքի են ընդունվում մրցույթով, Խորհրդի սահմանած կարգով՝ հինգ տարի ժամկետով Աշխատակազմի հետ կնքված աշխատանքային պայմանագրով, որի գործողությունը կարող է նույն ժամկետով երկարաձգվել իրավասու հանձնաժողովի

առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ (Ազգային ժողովի աշխատակարգի 109-րդ կետ):

Աշոտ Արծրունի Եղիազարյանը ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը և նույն ինստիտուտի ասպիրանտուրան: Նա ունի տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, հեղինակ է չորս մենագրությունների, հիսունից ավել գիտական հոդվածների և տասնյակ հետազոտությունների: Աշոտ Եղիազարյանն ավարտել է նաև Ջորջ Մարշալի անվան Անվտանգության հետազոտությունների եվրոպական կենտրոնի քոլեջի անվտանգության հարցերի խորացված կուրսը: Բացի այդ, մասնակցել է բազմաթիվ ուսումնական այցերի և որակավորման բարձրացման դասընթացների Հյուսիսային Մակեդոնիայում, Ճապոնիայում, Կանադայում, Ավստրիայում, Շոտլանդիայում, Ուելսում:

Աշոտ Եղիազարյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է 1989 թվականից, աշատելով որպես տնտեսագետ Հրազդանի մի շարք արդյունաբերական ձեռնարկություններում, որպես գլխավոր մասնագետ, իսկ այնուհետև վարչության պետ աշխատել է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության արժեթղթերի և բորսաների տեսչությունում, ՀՀ արժեթղթերի շուկայի տեսչությունում, ՀՀ պետական գույքի կառավարման նախարարությունում: Աշոտ Եղիազարյանը աշխատել է նաև մասնավոր հատվածում՝ որպես աուդիտոր, ոչ կառավարական կազմակերպությունների հատվածում՝ որպես Կորպորատիվ Կառավարման կենտրոն հիմնադրամի տնօրեն, Միջազգային կազմաերպությունում (ՄԱԿ-ի զարգացման ծրագիր)՝ որպես փորձագետ: Աշոտ Եղիազարյանը որպես քաղաքական և տարածաշրջանային տնտեսության հարցերով հետազոտող աշխատել է ՀՀ նախագահին առընթեր քաղաքական հետազոտությունների ինստիտուտում: 2001 թվականից առ այսօր Աշոտ Եղիազարյանը որպես դոցենտ աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

2016 թվականի հունվարի 16-ից, մրցույթի արդյունքում հաղթել և նշանակվել է Ազգային Ժողովի բյուջետային գրասենյակի փորձագետի պաշտոնում, որտեղ աշխատում է առ այսօր (աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանում է 2021 թվականի հունվարի 16-ին): Բյուջետային գրասենյակի փորձագետի պաշտոնում Աշոտ Եղիազարյանի գործունեության ոլորտներն են մակրոտնտեսական շրջանակը, պետական բյուջեի եկամուտներն ու ծախսերը, ոչ ֆինանսկան ակտիվների հետ գործառնությունները, պետական բյուջեի դեֆիցիտը և պետական պարտքը: Աշոտ Եղիազարյանը ներգրավված է նաև բյուջետային ծրագրերի, ծրագրային միջոցառումների և դրանց կատարողական հիմնական ցուցանիշների բարելավման ու մշակման աշխատանքներում:

Պայմանավորված վերոնշյալով, ինչպես նաև աշխատանքի անընդհատությունն ու շարունակականությունն ապահովելու կարևորությամբ, նպատակահարմար է հնարավորություն տալ Բյուջետային գրասենյակի փորձագետ Աշոտ Արծրունի Եղիազարյանին ևս 5 տարի ժամկետով իրականացնել իր աշխատանքային պարտականությունները՝ ՀՀ Աժ նախագահին առաջարկելով նշված ժամկետով երկարաձգել նրա և Ազգային ժողովի աշխատակազմի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը: